

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԱՆ ՍՐԿ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԿԱՆՈՆԸ ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(պարմահամեմարական ակնարկ)

Քրիստոնեական ասարվածաբանության մեջ Սուրբ Գրքի կանոնն ամբողջովին վերաբերում է սրբազան գրվածքների ցուցակին, որը հանդես է գալիս իբրև չափանիշ կամ շեշտադրված նորմ քրիստոնեական հավարի ու կյանքի համար:

«Canon» եզրն ածանցված է հունարեն *Κανον*, իսկ եբրայերեն *קנה* (*Kaneh*) բառերից, որոնք թարգմանաբար նշանակում են «եղեգ» կամ «չափման միավոր»¹: Կանոնի նրբերանգային իմաստներից մեկն է «քանոնը»²: Ըստ այսմ՝ չափանիշային իմաստով կանոն բառը շարք հաճախ այլաբանական կիրառություններ է ստանում մասնավոր գրականության մեջ, պարագայաբար այն արտացոլվում է արվեստի և նրաժշկության բնագավառներում³: Առավել նշանակալից է այն իրողությունը, ըստ որի՝ կանոնի ըմբռնումը, որպես հավարի և կյանքի չափորոշիչ, գերակա ազդեցություն ունի քրիստոնյա միշտից հեղինակների աշխատություններում, որոնք ապրել ու գործել են Բ. հ. Ա.-Գ. դարերում⁴: Վերոնշյալ մտքի վառ արտացոլումն է Պողոս առաքյալի հեղինակավոր վկայությունը. «Եւ որ մի անգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղութիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն, եւ ի վերայ Իսրայելիւն Աստուծոյ» (Գաղ. Զ. 16):

Կղեմես Նոմենացին մարմանաշում է «մեր ավանդության փառավոր և սուրբ կանոնը», որը փորձում է հակադրել դատարկ ու սին հոգսերին⁵:

Կղեմես Ալեքսանդրացին հորդորում է քրիստոնյաներին ապրել «հավարի և ճշմարտության կանոնի համեմար»⁶:

Նույն կերպ է վարվում նաև Իրինեոսը՝ հաճախակի խոսելով «ճշմարտութ-

1 Տե՛ս **Bruce M. Metzger**, *The Canon of the New Testament. Its Origin, Development, and Significance*, Oxford, 1987, էջ 289-293:

2 Տե՛ս **Վհարոն Կայայան**, Տին Կրակարանի ներածություն, Երևան, 2000, էջ 23:

3 Տե՛ս **Nolan B. Harmon**, *The Interpreters Bible, A Commentary in twelve Volumes*, vol. 1, Abingdon press, 1952, էջ 32:

4 Տե՛ս **Փ. Архиеп. Гумилевский**, *Историческое учение об отцах церкви*, Москва, 1996, էջ 7-11:

5 Տե՛ս «Գանձասար», հ. Ե., Երևան, 1994, էջ 119-120 (հին հունարենից թարգմանեց Սիմոն Գրաշաբլյանը):

6 **П. Иоанн Мейендорф**, *Введение в святоотеческое Богословие*, Москва, 2002, с. 97-101.

յան կանոնի մասին», որը բխում է Սուրբ Գրքից եւ Ավանդությունից, բայց երբեմն այլափոխման ու խեղաթյուրման է ենթարկվում հերերիկոսների կողմից⁷: Բայց, այնուամենայնիվ, որոշ քրիստոնյաներ մի փոքր այլ ձևով են հասկանում եւ կիրառում կանոնական թելադրանքի հիմքում ընկած ակտերը⁸:

Ի մասնավորի՝ Պողոս առաքյալը Բ. Կորնթացիս Ժ. 13-16-ում այն օգրագործում է՝ նշելու եւ փաստելու իր առաքելական ծառայության աշխարհագրական սահմանները, որոնք աստվածային նախախնամության առաջնորդությամբ բաժանվեցին իրեն. «Այլ մեր ոչ եթէ յանչափս ինչ պարծեսցուք, այլ ըստ չափոյ կանոնին գոր բաժանեաց մեզ Աստուած չափով՝ հասանել մինչեւ առ ձեզ: Իբր ոչ եթէ հասու ինչ չիցենք ի ձեզ, եւ ձգտեցուցանիցենք զանձինս, քանզի մինչեւ առ ձեզ հասաք աւերարանաւն -Քրիստոսի... Ի վեր եւս քան զձեզ աւերարանել, ոչ օտար կանոնաւ ի պապրաստականս ինչ պարծել»⁹:

Դ. դարի սկզբներին կանոններն առավելաբար կիրառության մեջ մտնան եկեղեցական ժողովների կողմից ընդունված ու ճանաչված դեկրետները (բարձրագույն իշխանության՝ մարմնի որոշումը, որ օրենքի ուժ ունի. իրավական ակտի անվանում)¹⁰ ընդգծելու համար: Դ. դարի 2-րդ կեսերից սկսած կանոնը եւ դրա գործածումը վավերացվեց եւ ամբողջացվեց որպես քրիստոնեական սրբազան գրքերի պաշտոնական ցուցակ¹¹: Նոգեւորականության պաշտոնական ցուցակը, որն անմիջական աղերսներ ունի Եկեղեցու հետ, ըստ Նիկիայի կանոնների՝ նույնպես վկայակոչվում է իբրեւ կանոն¹²:

Աթանաս Ալեքսանդրացին 367 թ. գրած իր 39-րդ Զարկական (Festal¹³) նամակում գալորոշեց կանոնական գրքերը (Βιβλία κανονισµενα) պարականոններից¹⁴: Իսկ 363 թ. Լատդիկեի ժողովը որոշում կայացրեց, ըստ որի՝ «միայն կանոնական գրքերը պետք է ընթերցվեն եկեղեցիներում»¹⁵:

Նամաձայն ԾԵ. կանոնի միավորի՝ «Չէ մարդ յիմաստութենէ ուրուք եղեալ սաղմոս պաշտել յեկեղեցւոջ, բայց եթէ ի գրոց սրոց իցէ կամ որ կանոնեալքն են յեկեղեցւոյ, թէ սաղմոսք, թէ արհնութիւնք: Այնպէս եւ գիրս ինչ չէ պարտ կարդալ յեկեղեցւոջ, բայց եթէ որ կանոնեալքն են,

7 Տե՛ս անդ, էջ 36, 38, 41:

8 Տե՛ս Gesenius William, Brown Francis, A Hebrew and English Lexicon of the Old Testament, Oxford, New York, 1906, էջ 3-5:

9 «Աստուածաշունչ Մատթան Նին եւ Նոր Կրակարանաց», ՆԱԸ, Երևան, 1997:

10 Տե՛ս Ալ. Մարգարյան, Աշ. Նայրապետյան, Օտար բաների բացատրական բառարան, Երևան, 2004, էջ 104:

11 Տե՛ս Նավթր-Քյոսեյան, Եկեղեցու Նայրեր, Վարդապետներ, Երևան, 2007, էջ 42-43:

12 Տե՛ս Иоанн Епископ, История Святых Вселенских Соборов, вып. 1, Вселенские Соборы: Никейский 1-ый, Константинопольский 1-ый, Ефесский, Москва, 1871, էջ 37-45:

13 Տե՛ս П. Иоанн Мейендорф, նշվ. աշխ., էջ 145. նաև՝ Նավթր-Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 41:

14 Տե՛ս Ernst Käsemann, The Canon of the New Testament and the Unity of the Church, In Essays on New Testament Themes, London: SCM, 1964, էջ 75-78:

15 «Կանոնագիրք Նայոց», հ. Ա., աշխ.՝ Վազգեն Նավթյանի, Երևան, 1964, էջ 224-225:

այսինքն է՝ զՆոր արեւնս եւ զՀին Կրակարանս: Զինչ արժան է կարդալ՝ են այսոքիկ. զԱրարածս, զԵլս, զԴեպացիս, զԹիւս, զԵրկրորդ արեւնս, զՅնաու Նաւայ, զԴարաւորն, զՆոյթ, զԹագաւորութիւնս Դ., զՄնացորդս Բ., Եգր Բ., զՍաղմոսն Դավթի ճԾ., զՍողոմոնի Գ.՝ զԱռակս, զԵկդեսիաստեան, զԵրգս Երզոցն. զՅոր, զԲԺ. մարգարէսն՝ Ովսէէ, Ամովս, Միքիէ, Յովել, Արդիու, Յովնան, Նաոււմ, Ամրակոււմ, Սոփոնիա, Անգեա, Զաքարիա, Մաղաքիա, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, Մակարայեցիք»¹⁶:

Այսպիսով, Դ. դարի վերջին կանոնի քրիստոնեական ընկալման երկու փառաբնեւ մոտեցումները միացան, որի արդյունքում՝ ա) կանոնն սկսեց հանդես գալ որպէս քրիստոնեական կյանքի ու հավարի հստակ չափանիշների փոխարինում, բ) «սրբազան գրքերի ցուցակ» բոլոր քրիստոնյաների համար¹⁷:

Մեր օրերում գրեթե բոլոր քրիստոնյաները՝ որպէս Սուրբ Գրքի քրիստոնեական կանոնի առաջին ու անբաժան մաս, ընդունում են երրայական Աստվածաշնչի համապարասխան գրքերը¹⁸:

Նարկ է նշել, որ Հին Կրակարանի բողոքական կանոնը համապարասխանում է երրայական Աստվածաշնչին¹⁹: Սակայն, այնուամենայնիվ, Յոթանասնից թարգմանության ազդեցությամբ՝ նյութի դասավորվածությունը փոքր-ինչ այլ ուղղվածություն ունի եւ բաժանված է 39 գրքի: Այսպէս մասնավոր կերպով ներկայացված են երկու հարյուրից բաղկացած պարամական գրքերը (Ա., Բ. Սամուէլ, Ա., Բ. Թագավորաց, Ա., Բ. Մնացորդաց, Եգրաս-Նենմի) եւ փաստերկու փոքր մարգարէների գրվածքները, որոնք համարվում են առանձին գրություններ²⁰: Ըստ այսմ 39 գրքերն ունեն չորս բաժանում՝ Թորա (Շննդոց - Բ. Օրինաց), Պարամական գրքեր (Նեսու - Եսթեր), Իմաստության գրքեր (Նոր - Երգ Երզոց) եւ Մարգարէներ (Եսայի - Մաղաքիա)²¹:

Նոտմակաթողիկ Եկեղեցու հովանավորությամբ կարարված խմբագրությունը բովանդակում է երրայական Աստվածաշնչի բոլոր գրքերը, ինչպէս նաեւ՝ 7 հավելյալ գրքեր, որոնք են՝ Տոբիթ, Նուդիթ, Ա., Բ. Մակարայեցիս, Սողոմոնի Իմաստություն, Սիրաք եւ Բարուք²²: Առկա են նաեւ մի շարք խմբագրություններ,

16 Անդ, էջ 240-241:

17 Տե՛ս **John F. Priest**, Canon and Criticism: A Review Article, Journal of the American Academy Religion, vol. 48, No. 2, Oxford University Press, էջ 259-271:

18 Տե՛ս **William J. Abraham**, Canon and Criterion in Cristian Theology, Oxford, 2002, էջ 57-75 (խաճայն հրեական ավանդության այս գրքերը բաժանված են երեք մասի՝ Թորա (Torah, תּוֹרָה) Շննդոց, Ելք, Դեպական, Թվեր, Բ. Օրենք), Մարգարէներ (Nevy'yim, נְבִיאִים)Նեսու, Դարավորաց, Ա., Բ. Սամուէլ, Ա., Բ. Թագավորաց, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, ԺԲ. փոքր մարգարէներ), Գրություններ կամ Գրքեր (Ktuvym, סְפָרִים) Սաղմոսաց, Նոր, Առակաց, Նոյթ, Երգ Երզոց, Ժողովող, Ողբեր, Եսթեր, Դանիէլ, Եգրաս-Նենմիս, Ա., Բ. Մնացորդաց): Այս գրքերի հավաքածուն ավանդաբար կոչվում է Թանախ (Tanakh, תַּנַּ"ךְ): Թանախը փառացի հասկալում է, որ ներառում է յուրաքանչյուր մասի առաջին երրայական փառը, այսինքն՝ Դ՛ՆՐ:

19 Տե՛ս **Magne Sæbo**, On the Way to Canon, Creative Tradition History in the Old Testament, 1998, էջ 93:

20 Տե՛ս անդ, էջ 94:

21 Տե՛ս "The growth of the Pishitta version of Chr. Wordsworth", The Holy Bible, I, Oxford, 1881, էջ 308-309:

22 Տե՛ս անդ, էջ 310:

որոնցում գերեզմանում են Դանիելի և Եսթերի գրքերը: Վերոնշյալ գրքերը հունական (Septuagint) և լատինական (Vulgate) ձևագրերի ավանդության անբաժան մասն են կազմում²³: Կաթոլիկյան Սուրբ Գրքում դրանք տեղադրված են անվիճելի գրքերի միջև, մինչդեռ բողոքական փառերականներում հանդես են գալիս իբրև Հին Կտակարանի հավելադրություն²⁴:

Ինչպես հայտնի է, յոթ հավելյալ գրքերը երբեմն կոչվում են նաև «երկրորդականոններ», քանի որ նրանց տեղը հաճախ ավանդական կանոնում վիճարկվում է²⁵: Վերաբերյալ գրքերը հայտնի են իբրև ապոկրիֆներ, այսինքն՝ ծածկված կամ գաղտնի գրքեր, որոնք ի թիվս այլ գրքերի (Գ., Դ. Մակաբայեցիս, Մանասեի աղոթք, Ա., Բ. Եզրաս) առկա են Աստվածաշնչում, սակայն չեն ընդունվում ո՛չ բողոքականների, ո՛չ էլ կաթոլիկների կողմից²⁶:

Ուղղափառ Եկեղեցիներում, ի համեմատություն Հռոմեակաթուղիկ ավանդության, կանոնն առավել լայն է և ընդգրկում, ըստ որի՝ Ուղղափառ կանոնում ներառված են Գ. Մակաբայեցիսն ու Բ. Եզրասը: Եթովպական Ուղղափառ Եկեղեցու կանոնում կան ավելի շատ գրքեր, որոնցից են՝ Ա. Ենովք, Հոբելյանականներ, Կեղծ Հովսեփի և այլն (1 Enoch, Jubilees, pseudo-Josephus)²⁷:

Հին Կտակարանի կանոնի վավերականության խնդրի հետ կապված՝ հիմնականում առկա է երկու կարծիք: Ըստ առաջին և ամենից ընդգրկում տեսության՝ եբրայական գրվածքների ցուցակը վերջնականորեն որոշվեց Յամնիայի ժողովի ժամանակ, որը տեղի ունեցավ Ա. դարի վերջերին²⁸: Համաձայն երկրորդ դիրքորոշման՝ հրեաներն ու բողոքականները հետևում են պաղեստինյան կանոնին, մինչդեռ կաթոլիկները և ուղղափառները որդեգրել են ալեքսանդրյան կանոնը²⁹:

Հարկ է նշել, որ Յամնիան հունական փառադարձումն է եբրայական Յավնեհյամ վայրի, որը տեղակայված էր Իսրայելի ծովագրին՝ ժամանակակից Թել-Ավիվից ոչ շատ հեռու³⁰: Հռոմեացիների կողմից Երուսաղեմի նվաճումից և Տաճարի կործանումից հետո՝ 70 թ. Յամնիան դարձավ վերականգնման շարժման կենտրոն, իսկ շարժումը ղեկավարում էր Յոհան Բեն Զաքայան, որի նպատակն էր վերականգնել հուդայականությունը՝ միաժամանակ ամուր կառչելով Սուրբ Գրքի մեկնության և ավանդության ամրապնդման հիմքերից³¹:

23 Տե՛ս Tremper Longman III & Raymond B. Dillard, An Introduction to the Old Testament, 2007, էջ 213-222, 371-395:

24 Տե՛ս S. Z. Leiman, The Canonization of Hebrew Scripture: The Talmudic and Midrashic Evidence, Hamden, 1976, էջ 73-92:

25 Տե՛ս անդ, էջ 85:

26 Տե՛ս անդ, էջ 85-86:

27 Անդ, էջ 86-87:

28 Տե՛ս անդ, էջ 87:

29 Տե՛ս անդ, էջ 88:

30 Տե՛ս John Barton, John Muddiman, The Pentateuch, The Oxford Bible Commentary, 2010, էջ 56-57:

31 Տե՛ս Jacob Neusner, Judaism: The Evidence of the Mishnah, 2nd ed., Atlanta, 1988, էջ 32:

Այդ ժամանակ Տաճարը կործանված էր, իսկ հրեա ժողովուրդն այլևս չէր կառավարում նախնիների երկիրը³²: Ի վերջո, այս լայնածավալ շարժումը կարողացավ համադրել մինչև 70 թ. եղած փարիսեցիական, քահանայական և դպրական ավանդույթները, որով ամուր հիմքերի վրա դրեց ռաբունական շարժումը³³: Ըստ մի շարք արժեքավոր աղբյուրների՝ Յամնիայի Յավնեհի շարժումը պարզապես ժողովական որոշումներից ածանցված կանխադրությունների բախում չէր, այլև՝ ակտիվ քննարկման ամբողջական դրսևորման հապկորոշ իրողություն³⁴: Սակայն այդ քննարկումները չկարողացան միանգամից և ամբողջապես ազդել հուդայականության վրա: Իրերև պայմանական անցք՝ այն կարող ենք որակել Յոհան Բեն Զաբայայի գլխավորությամբ կազմակերպված փոքրամասնության պաշտպանության մասնահարուկ դրսևորում³⁵: Յավնեհի ժողովում քննարկված ամենասուր և գլխավոր բանավեճն աղերսվում էր այն հարցին, թե որ գրքերն են ձեռքերն անմաքուր դարձնում³⁶: Այսպիսի հարակ ու ամբողջական կերպով շեշտադրված էին նաև Ժողովողի և Երգ երգոցի հետ կապված խնդիրները. մասնավորաբար կանոնադառնանք Ժողովողի խնդրին, ըստ որի՝ թեև գիրքը լայն կիրառություն էր գտել գիտաուսուցողական շրջանակներում, սակայն մեծ կրքեր բորբոքվեցին գրվածքի կանոնականացման հարցի շուրջ³⁷:

Այս պայթյալը լիովին հասկանալի է. նույնիսկ մեր ժամանակներում հեղադարձ հայացքով դիտելիս պարզ է դառնում, որ այն սրացել է Բ. ա. Գ. դարի ամենահերձվածողական գիրք անվանումը³⁸: Ըստ որոշ կարծիքների՝ պարճաոր Ժողովողի սադուկեցիական պարկանելությունն է, թեև հակամարտությունն իրականում ծավալվում էր ոչ թե սադուկեցիական և փարիսեցիական կուսակցությունների, այլ՝ **Շամայի** ու **Տիլլեի** դպրոցների միջև, ինչն ավարտվեց Տիլլեի դպրոցի հաղթանակով, և Ժողովողի գիրքը ներառվեց սուրբգրային կանոնի մեջ³⁹: Ուստի, առանց որևէ այլևայության, Ժողովողի գիրքն ընդգրկվեց նաև քրիստոնեական կանոնում շնորհիվ այն բանի, որ տեղ էր գտել Յոթանասնից բնագրի թարգմանության մեջ (Շամայի դպրոցի կարծիքով՝ Ժողովողը չի «արափավորում ձեռքերը», իսկ Տիլլեի դպրոցի համաձայն՝ «արափավորում է ձեռքերը»)⁴⁰:

32 Տե՛ս **Ю. Н. Иванов, В. А. Барановский**, Иудаизм, Минск, 2009, էջ 3-10, 11-28:

33 Տե՛ս անդ, էջ 7:

34 Անդ, էջ 8:

35 Տե՛ս անդ, էջ 8-9:

36 Տե՛ս **Mishnah, Yadaim**, 3-5, 1933. **Նսկոր արք. Գլնճյան**, Նավարի և բանականության հետքերով, Մոնոքեմիդի, 2003, էջ 328:

37 Ավելի հարակ տե՛ս Վարդան տրկ. Աստվանի մագիստրոսական թեզը՝ «Ժողովողի առնչությունները անրիկ հունական փիլիսոփայության և մշակույթի հետ», էջ 8. նաև՝ **W. D. Davies, Louis Finkelstein**, The Cambridge History of Judaism, vol. 2, New York, 2007, էջ 363:

38 Տե՛ս անդ, էջ 8-9:

39 Տե՛ս անդ, էջ 9:

40 Անդ, էջ 9-10:

Սուրբ Գրքում ներառվելու մասին քրիստոնեական առաջին վկայությունը Մելիպոս Սարդեցու Բ. դարավերջին կազմած Աստվածաշնչի կանոնն է⁴¹:

Ժողովողի գիրքն ընթերցվում է սինագոգներում Տաղավարահարաց տոնի չորրորդ օրը⁴², իսկ Հայ Եկեղեցու ծիսակարգում Ճաշոցից մի հարված ընթերցվում է Պայծառակերպության տոնի ժամանակ⁴³: Իսկ ինչ վերաբերում է Երգերգոցի խնդրին, այն վիճարկելի էր համարվում, քանի որ նրանում առկա էր թույլաբերելից ավելի էրոտիզմ կամ սեռականություն⁴⁴:

Մյուս թնջուկը կապված էր Եզեկիելի մարգարեության հետ, որովհետև այս գիրքը հակադրվում էր Թորայի որոշ կետերին⁴⁵: Այս գալիս էր Առակաց գրքի վերաբերյալ փարակարծությունը, որ ներկայացված էր հակասականության լույսի ներքո⁴⁶:

Իսկ ամենավերջում բնութագրվում էր նաև Եսթերի գիրքը. առաջ էր քաշվում այն պարզ նկատառումը, ըստ որի՝ Եսթերի գրքի եբրայական բնագրում երբեմն չի հիշատակվում Աստված անունը⁴⁷:

Այս բանավեճերի ընթացքի մասին գրված է միմիայն ռաբունական աղբյուրներում: Դրանցից զատ ուրիշ հեղինակավոր աղբյուրներ չկան, որոնք կհասարարեն վերոբերյալ առարկությունների վավերականությունը⁴⁸: Ըստ Ս. Ջ. Լեյմանի՝ եբրայական կանոնն ավելի շուտ է եղել, քան Յավնեհի ժողովը⁴⁹:

Ուստի, Թորայի մաս են կազմել առաջին հինգ գրքերը՝ հայրենի որպես Pentateuch, բայց Թորայի վերջնական ձևը կառուցվածքային առումով երևան է եկել Իսրայելի բաբելոնյան արքայից հետո միայն⁵⁰:

Այս «օրենքի գրքերը» հայրենի են եղել Հոսիա թագավորի ժամանակ, եւ նա իր խմբագրական աշխատանքները կազմակերպելիս մեծապես օգտվել է դրանցից. «Եւ ասէ Քեղկիա քահանայ մեծ ցՍափան դպրապետ. Մարեան օրինաց գրի ի փան Տեառն. եւ եր Քեղկիա ցՍափան. եւ ընթերցաւ զայն: Եւ փարաւ առ արքայ զպարգամն, եւ ասէ. Չուլեցին ծառայք քո զարծաթն զդեալ ի փան Տեառն, եւ ետուն զայն ի ձեռս գործաւորաց գործոցն վերակացուաց ի փան Տեառն: Եւ խօսեցաւ Սափան դպրապետ ընդ արքայի եւ ասէ. Մարեան մի եր ցիս Քեղկիա քահանայ. եւ ընթերցաւ զայն

41 Stn Thomas C. Oden, J. Robert Wright, Ancient Christian Commentary on the Book of Ecclesiastes, Edinburg, 1980, էջ 7:

42 Stn անդ, էջ 10:

43 Stn «Ճաշոց գիրք», Ս. Էջմիածին, 1999, էջ 542:

44 Stn Ronald E. Heine, Reading The Old testament with the Ancient Church, Baker Academic, 2007, էջ 17-18:

45 Stn անդ, էջ 9:

46 Stn անդ, էջ 10:

47 Անդ, էջ 10-11:

48 Stn անդ, էջ 11:

49 Stn S. Z. Leiman, The Canonization of Hebrew Scripture: The Talmudic and Midrashic Evidence, Hamden, 1976, էջ 21:

50 Stn անդ, էջ 21-22:

Սափան առաջի արքայի: Եւ եղև իբրև լուաւ արքայ գրանս մարենի օրինացն, պարտեաց գհանդերծս իւր: Եւ պարուէր եւր արքայ Քեդկիայ քահանայի, եւ Աքիկամայ որդւոյ Սափանայ, եւ Աքորորայ որդւոյ Միքէի եւ Սափանայ դպրապետի եւ Յասայեայ ծառայի արքայի, եւ ասէ. Երթայք խնդրիցէք ի Տեառնէ վասն իմ եւ վասն ամենայն ժողովրդեանդ եւ վասն ամենայն Յուդայ, վասն բանից մարենիդ գրելոյ այդորիկ. զի մեծ բարկութիւն Տեառն բորբոքեալ է ի մեզ. փոխանակ զի ոչ լուան հարք մեր բանից մարենիդ այդորիկ առնել ըստ ամենայն գրելոցդ գմէնջ»⁵¹:

Վերոնշյալ հավաստումն արժեւորում եւ բարձրացնում է Թորայի դերն ու նշանակությունը՝ իբրև օրենքի գործադրում Իսրայելի կյանքում, քանի որ, ինչպես հայրնի է, այն լայն կիրառություն է ունեցել Իսրայելի կյանքում, երբ վերջինս գտնվում էր Պարսից իշխանության ներքո⁵²: Այս փաստի վավերացումն արժանավոր հիշատակությունն է այն բանի, որ Ք. ա. Ե.-Դ. դարերում Թորան ունեցել է կանոնական կարգավիճակ⁵³:

Սիրաքի գիրքը, որ նմանեցվել էր Ժողովողին եւ անկանոն էր համարվում հրեական ու բողոքական կանոնի համար, գրվել է եբրայերենով՝ Երուսաղեմում Ք. ա. 200 թ. Սիրաքի որդի Ղևուտի կողմից, իսկ Ք. ա. 132 թ. թարգմանվել է հունարեն⁵⁴: Իսկ ինչ վերաբերում է հունարեն բնագրին, այն մի մեծ մասն է կազմում կաթոլիկ կանոնի, մինչդեռ եբրայական կանոնն ամբողջապես փառքեր է բողոքական կանոնից⁵⁵: Առավել հիշարժան է նախաբանը, որտեղ թողնելով կարգը եւ իր պապին, որը «մշտապես հավատարիմ էր Օրենքին, Մարգարեններին եւ Գրություններին»⁵⁶: Հարկ է նշել, որ այս արժանահավատ եւ վավերական վկայությունը մարնանշում է այն անհերքելի իրողությունը, ըստ որի՝ եբրայական կանոնի եռամասնյա բաժանումը ճանաչված էր եւ մեծ հռչակ ուներ Ք. ա. Ե.-Դ. եւ գուցե ավելի վաղ դարերում, իսկ մարդիկ հավատացած էին, որ դրանք բովանդակում էին Իսրայելի ավանդական իմաստությունը⁵⁷: Եզրակացնում ենք, որ վերոհիշյալը թերեւս վիճաբանության մեկ կողմն էր միայն, ինչը մակաբայեցիներին Ք. ա. 160 թ. մղեց ապարամբության: Նրանք ձգտում էին Թորային հավելել մի նոր օրենքի կողերս, որով պետք է իսրայելացիք առաջնորդվեին դեպի Իսրայելի պարմական փարածք⁵⁸: Համաձայն Ա. Մակ. Ա. 56-57-ի՝ վերոբերյալ խառնաշփոթություններն առաջացել էին ոչնչացնելու համար Թորայի գրքերը եւ

51 «Յոթանասնից», Դ. Թագ. ԻԲ. 8-13:

52 Տե՛ս S. Z. Leiman, էջ 23:

53 Տե՛ս ակոյ, էջ 10-11:

54 Տե՛ս ակոյ, էջ 10:

55 Տե՛ս William J. Abraham, Canon and Criterion in Cristian Theology, Oxford, 2002, էջ 95-98:

56 Ակոյ, էջ 100:

57 Տե՛ս R. Beckwith, The Old Testament Canon of the New Testament Church and its Background in Early Judaism, 1986, էջ 7-11:

58 Տե՛ս A. C. Sundberg, The Old Testament in the Early Church, Cambridge, 1964, էջ 58-62:

պարթևություն այն մարդկանց, որոնք խնամքով պահպանել էին դրանք⁵⁹: Ի փարբերություն մի շարք փարակարծությունների՝ մակարայեցիների կարարած հեղաշրջումն առիթ հանդիսացավ հրեաների համար, որպեսզի վերջիններս հավաքագրեին պարերազմի ընթացքում կորցրած մնացյալ գրքերի փաթեթները (Բ. Մակ. Բ. 14)⁶⁰:

Կարելի է եզրակացնել, որ դեռևս պարմական անցյալում հրեաների մեջ արդեն ձևավորվել էր սրբազան գրքեր ունենալու հստակ ու վառ արտահայտված գաղափարը: Քումրանյան ձեռագրերը ոչ հասարարում է ոչ էլ հերքում են Բ. ա. Բ. դարում արդեն ամբողջական եբրայական կանոնը⁶¹: Բայց, անշուշտ, Քումրանյան ձեռագրերն առավելաբար հնարավորություն են ընձեռում՝ քաղելու շարք արժեքավոր փեղեկություն եբրայական Սուրբ Գրքի բնագրերի պարմության վերաբերյալ⁶²:

Ի շարք այս հեղինակավոր վավերացումների՝ պետք է նշենք, որ կանոնական է անկանոն գրքերի հիմնահարցի վերաբերյալ առկա են փարաբեռն վարկածներ⁶³:

Շնորհիվ «Կարգուկանոնի Ձեռնարկ» (Manual of Discipline), «Դամասկոսյան փաստաթուղթ» (Damascus Document), «Գոհաբանական օրհներգեր» (Thanksgiving Hymns), սուրբգրային մեկնություններ (Pesharim) և այլ գրությունների՝ կարողանում ենք ըմբռնել ու հասկանալ կանոնական է անկանոն գրքերի զանազանությունները:

Ի պարասխան հակահերա Ապպիոն Ալեքսանդրացու գրադարությունների՝ Նովսեփոսը հակադրում է իր աշխարհայությունը, որը սերտ աղերսներ ունի հունական կանոնի կազմավորման գործընթացի հետ⁶⁴: Նովսեփոսը, վկայակոչելով հունական կանոնի 22 գրքերը, բաժանում է երեք դասակարգի՝ Մովսեսի հինգ գրքերը, մարգարեների փասներեք գրքերը, նաև հիշարկում է չորս այլ գրքեր, որոնք ներառում են օրհներգեր և ուսուցումներ մարդկային բարեկեցիկ կյանքի վերաբերյալ⁶⁵:

Ինչպես հայրնի է, 22 գրքերի մասին եղած ավանդական մոտեցումը գալիս է Դ. Եգրաս ԺԴ. 45-56-ից: Սրանք հավասարապես ընդունվել են նաև որպես արժեքավոր, եւ որպես անարժեք գրություններ⁶⁶:

Ոչ պակաս հետաքրքրական է այն փաստը, որ Ալեքսանդրիայում ապրող հրեաներն ունեցել են Սուրբ Գրքի ավելի ընդարձակ կանոն⁶⁷: Անդրադառնալով

59 Տե՛ս անդ, էջ 64:

60 Տե՛ս անդ, էջ 65-66:

61 Տե՛ս **Geza Vermes**, *The Dead Sea Scrolls*, 4th edition, Sheffield Academic press Ltd, 1995, էջ 75-92:

62 Տե՛ս անդ, էջ 90:

63 Տե՛ս **Ю. Н. Иванов, В. А. Барановский**, *Иудаизм*, Минск, 2009, էջ 25-26:

64 Տե՛ս անդ, էջ 30:

65 Անդ, էջ 31-32:

66 Տե՛ս անդ, էջ 33:

67 Տե՛ս անդ, էջ 11-12:

այս խնդրին՝ Սանդերգը նշում է, որ իրական պատմությունն այնքան էլ պարզ ու հստակ չէ, ինչպես կարծում են շարերը⁶⁸:

Հունական Աստվածաշունչն ունի առավել երկար ու բազմաշերտ պատմություն: Կանոնի ձևավորման գործընթացն սկսվել է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանից և ձևագնդի սկզբունքով զարգացել է պատմության հոլովություն⁶⁹:

Ի վերջո, Septuagint-ի պահանջն այն էր, որ եբրայական գրվածքները ճանաչվեին ու հասկացվեին ոչ հրեաների, հունախոս հրեաների և մնացած ազգերի կողմից, որոնք բնակություն էին հաստատել հրեաների փարածքներից և՛ դուրս, և՛ ներս⁷⁰:

Կանոնում ընդգրկված գրքերը բաժանվել են երեք խմբի՝ Թորա, Մարգարեներ, Գրվածքներ:

Յոթանասնիցը շարունակում էր մնալ հունալեզու Եկեղեցու Հին Կրակարանը, բանի որ նրանում ընդգրկված գրքերը քրիստոնեական եկեղեցիներին ավանդվել են մինչև Ռեֆորմացիայի դարաշրջանը⁷¹:

Ավերարանի հեղինակները, առանց բացառության, արժեքավոր և մեծ կարևորություն ունեցող մեջբերումներ են անում Յոթանասնից թարգմանությունից: Այսպես էին վարվում նաև Վաղ Եկեղեցու ջարագովները⁷² ապացուցելով քրիստոնեության բացառիկ ճշմարտությունները (օր.՝ Septuaginta-ում առկա Ես. Է. 14 համարն իր արտացոլումն է գրել Մարթ. Ա. 23-ում և այլն):

Հրեաները պնդում էին, որ եբրայական բնագրում չկա այն բաների լրումը, որին հավարում են քրիստոնյաները, ուստի հրեաները մշտապես մերժում և անտեսում էին Յոթանասնիցը:

Հարկ է նշել, որ Յոթանասնիցը հուդայականության ծնունդ էր և կիրառելի էր սփյուռքի հրեաների կողմից, թեև ժամանակի ընթացքում դարձավ «քրիստոնյաների սեփականությունը»⁷³: Վստահ համոզում չկա, թե ինչպես Ալեքսանդրիայում ապրող հրեաների մոտ հղացավ կանոնական գրքերի ամբողջացման գաղափարը⁷⁴:

Գոյություն ունի մի արժեքավոր փաստարկ և ամբողջական վկայություն, ըստ որի՝ Հին Կրակարանի գրքերի նախնական ցանկը կազմվել է Ռոզինետի (185-254 թթ.)⁷⁵, իսկ ավելի ուշ՝ Աթանաս Ալեքսանդրացու կողմից (367 թ.) Զարկական նամակում⁷⁶, որը կազմելիս երկուսն էլ աչքի առջև ունեցել են եբրայական գրքե-

68 Տե՛ս A. C. Sundberg, The Old Testament in the Early Church, Cambridge, 1964, էջ 65:

69 Տե՛ս անդ, էջ 66-67:

70 Տե՛ս անդ, էջ 70:

71 Տե՛ս Jaroslav Pelikan, Reformation of Church and Dogma (1330-1700), Chicago and London, vol. 4, էջ 74-82:

72 Տե՛ս П. Иоанн Мейендорф, Введение в святоотеческое Богословие, Москва, 2002, էջ 50-52:

73 Robert M. Grant, The Apostolic Fathers, New York, 1964, p. 44.

74 Տե՛ս անդ, էջ 45-46:

75 Տե՛ս Եզնիկ ծ. վրդ. Պեղրոսյան, Հայրաբանություն, հր. Ա., Էջմիածին, 1996, էջ 140:

76 Տե՛ս Հակոբ Քյոսեյան, նշվ. աշխ., էջ 43:

րի կանոնը: Նրանք լայնորեն կիրառել են երկրորդականոն (deuterocanonical) գրքերը⁷⁷: Ըստ Կյուրեղ Երուսաղեմացու՝ Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո թագավորությունը բաժանվեց չորս իշխանության՝ Բաբելոնիա, Մակեդոնիա, Ասիա և Եգիպտոս: Եգիպտոսում թագավորող Պտղոմեոս Եղբայրասերը, լինելով գրականության մեծ սիրահար, համայն աշխարհից հավաքեց գրքեր. նրան օգնում էր արքայական գրադարանի հոգաբարձու Դեմետրիոս Փալեբացին: Պտղոմեոսը, լսած լինելով «Օրինաց և մարգարեններ» սրբազան գրքերի մասին, մրաձեց, որ լավ կլինի դրանք փերերից վերցնել ոչ թե բռնությամբ, այլ՝ բարեկամաբար և ընծաներով սիրաշահելու միջոցով: Բազում ընծաներ ուղարկեց Եղիազարին, որ այդ ժամանակ Երուսաղեմի փառալուստյան եր, ու խնդրեց նրան իր մոտ ուղարկել Իսրայելի 12 ցեղերից յուրաքանչյուրից վեցական թարգմանչի: Այս նրանց փերավորեց Ալեքսանդրիայի մոտ գտնվող Փարոսի առանձին հարկաբաժիններում: Երբ թարգմանիչները 72 օրվա ընթացքում ավարտեցին իրենց աշխատանքը, Պտղոմեոսը բոլորի ձեռագրերը հավաքեց, և սրացվեց այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը գրքերը թարգմանել էր միայնակ՝ առանց մեկ ուրիշի գործակցության⁷⁸: Պտղոմեոսը կարգադրում է կարդալ այս թարգմանիչների գրքերը, իսկ անվավերները չգործածել: Ուստի, Կյուրեղ Երուսաղեմացին Եկեղեցու գավակներին պատվիրում է չաղավաղել ընդունված կարգը, սերտել Նին Կրակարանի 22 գրքերը և հիշել դրանք իրենց փրկած անվանումներով⁷⁹: Ըստ նրա հեղինակավոր կարծիքի՝ Նին Կրակարանի Օրենքում Մովսեսի առաջին հինգ գրքերն են՝ Մատթեոս, Ելք, Դևտերական, Թվեր, Երկրորդ Օրենք: Ներկում են Նեսու Նավեի որդի, Դավարներ գրքերը՝ Նուբի գրքի հետ միասին, որը հերթականությամբ յոթերորդն է: Ըստ հրեից համոզման՝ Թագավորաց Ա. ու Բ. մեկ գիրք են կազմում, Թագավորաց Գ. և Դ.՝ երկուսը: Նրանց մոտ ինչպես Մնացորդաց Ա. և Բ., այնպես և Եզրաս Ա. ու Բ. մեկ գիրք են: Տասներկուերորդը Եսթերի գիրքն է: Պարսկական գրքերը սրանք են: Իսկ չափածո գրքերը հինգն են՝ Նոբ, Սաղմոսաց, Առակաց, Ժողովող և Երգ Երգոց, որը փաստորեն յոթերորդ գիրքն է:

Արևմտյան եկեղեցիների ավանդության հարցում ծանրակշիռ ազդեցություն է ունեցել Տերտուլիանոսը⁸⁰: Նա առաջինն էր, որ երկրորդականոն գրքերն անվանեց «apocrypha», որոնցից մեջբերումներ էր անում, սակայն չէր ընդունում որպես կանոնական գրվածքներ, պնդում էր, որ վերջիններս չեն կարող օգտագործվել վարդապետական և աստվածաբանական նկարագրումներով⁸¹:

Ե. դարում Օգոստինոս Երանելին հանդես եկավ որպես ընդարձակ կանոնի պաշտպան. այդ կանոնում զերեքված էին Տոբիթ, Նուբիթ, Ա. և Բ. Մակա-

77 Տե՛ս անդ, էջ 44-45:

78 Տե՛ս Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայության, Էջմիածին, 2007, էջ 72-73:

79 Տե՛ս անդ, էջ 72-75:

80 Տե՛ս Եգնիկ Ժ. վրդ. Պնարոսյան, նշվ. աշխ., էջ 194-210:

81 Տե՛ս անդ, էջ 197:

բայեցիս, Սիրաք, Իմաստություն Սողոմոնի և Բարուք գրքերը⁸²: Ուստի, շար կարևոր է այն պարագան, որ գրեթե բոլոր փեղական ժողովները որդեգրեցին Օգոստինոս Երանելու սկզբունքը, որի արդյունքում աստիճանաբար կանոնը դարձավ օրինաչափություն Արևելքի ու Արևմուտքի եկեղեցիների համար⁸³, սակայն Ռեֆորմացիան ամեն բան հեղափոխեց⁸⁴: Երբ ռեֆորմների ժամանակ հրապարակվեց «Sola Scriptura» բացարձակ համոզումը, բնականաբար, կարարվեց Սուրբ Գրքի կանոնական մասի «վերանայում» կամ «վերախմբագրում»⁸⁵: Մարտին Լյութերը մերժեց Բ. Մակ. ԺԲ. 45-46-ը, որն արտացոլում էր բարեխոսական աղոթքի սուրբգրային հիմքը: Նա քննադատեց Բ. Մակաբայեցիս ու Եսթերի գրքերը, քանի որ դրանցում արտահայտված էին հուդայականության և հեթանոսության՝ չափից ավելի մեծ շեշտադրում ունեցող փարբեր⁸⁶: Մի փոքր ավելի ուշ՝ 1534 թ., երբ Մ. Լյութերը Սուրբ Գիրքը թարգմանեց գերմաներեն, վերջում՝ որպես հավելված, փեղադրեց անկանոն կամ ապոկրիֆ գրքերի ցանկը⁸⁷: Ի պարասխան Լյութերի և մյուս բարեկարգիչների քայլերի՝ Տրիդենտի 1546 թ. ժողովը մի կողմ դրեց կամ անսխեսեց Ներոնիմոսի կողմից փարբերակված երբայական ճշմարիտ և պարականոն գրվածքները⁸⁸: Ժողովը հերքեց Վուլգատայի ավանդությանը և ընդունեց առավել ընդարձակ ու ամբողջական կանոն⁸⁹:

Այսպիսով, ԺԶ. դարի երկրորդ կեսին, մասնավորաբար Տրիդենտի ժողովում առաջին անգամ վերջնականորեն որոշակիացվեց Հին Կրակարանի կանոնական գրքերի ցանկը, որը մինչև մեր օրերը հռոմեակաթուրիկ ազդեցությամբ փեղական ընթացք է փախա այդ վավերական ամբողջականությանը⁹⁰: Ըստ որոշ փեղակերպների՝ բողոքականները հերքում են Պաղեստինյան, մինչդեռ կաթոլիկները՝ Ալեքսանդրյան կանոնին⁹¹:

Համաքրիստոնեական կանոնն առավել ընդգրկում է. վերցվել է երբայական կանոնից, բայց, այնուամենայնիվ, առկա են բազմակնճիտ խոչընդոտներ: Ուստի, բոլոր դեպքերն ու իրադարձությունները, որոնք անցել էին պարմության մամլիչի փակով, մեզ ուղղորդում են դեպի երբայաքրիստոնեական հակամարտության թարերաբեմ, որը միջանկյալ դիրք է զբաղեցնում Ներոնիմոսի «երբայական ճշմարտության» և Օգոստինոսի՝ Լատինական Արևմուտքի առաջ քա-

82 Տե՛ս Ն. Գ. վրդ. Զարբհանալյան, Պարմութիւն մարենագրութեան յունաց, հռովմեացոց և հարց Եկեղեցոյ, Վենետիկ, 1856, էջ 48-50:

83 Տե՛ս Նալոբ Բյոսեյան, նշվ. աշխ., էջ 280-288. նաև՝ Ս. П. Иоанн Мейендорф, Введение в святоотеческое Богословие, Москва, 2002, էջ 275-293:

84 Տե՛ս Jaroslav Pelikan, Reformation of Church and Dogma (1330-1700), vol. 4, Chicago and London, էջ 82-90:

85 Տե՛ս անդ, էջ 85-87:

86 Տե՛ս անդ, էջ 88:

87 Անդ, էջ 89:

88 Տե՛ս անդ, էջ 90-91:

89 Տե՛ս անդ, էջ 92:

90 Անդ, էջ 92-93:

91 Տե՛ս անդ, էջ 94:

շած կանոնական վավերականության միջև: Իսկ մարտահրավերները, որոնք երևան էին եկեղ բողոքական ու կաթոլիկ բախումներից, առավել ընդարձակեցին կանոնական գրքերի թիվը:

РЕЗЮМЕ

Общепризнано, что еврейская Библия возникла посредством сложного процесса формирования на протяжении веков. Еврейская Библия была порождена в сообществе Израиля и стала основным авторитетным источником еврейской общины; кроме того, она был принята ранним христианским сообществом и была с тех пор, как “Ветхий Завет”, используемый в качестве фундаментальной части ее авторитетного Священного писания, составленного как Канон. Наиболее широко используемое значение слова относится к канону Священного Писания т.е., список книг, расцененных Церковью как авторитетная и божественная. Эта статья представляет историю ветхозаветного Канона в Церкви во время раннего периода и принцип каноничности; во-первых, почему книги авторитетные и божественные, и во-вторых, когда и как они были приняты Церковью и собрались в Канон. В статье рассматриваются все возможные доказательства и обсуждения Соборов, связанных с Каноном Ветхого Завета.

SUMMARY

It is widely accepted that the Hebrew Bible came into being through a complicated formation process over centuries. The Hebrew Bible was originated in Israel's community and became a basic authority of the Jewish community; in addition, it was taken over by the early Christian community and was ever since, as the ‘Old Testament’, used as a fundamental part of its authoritative Scripture, constituted as a Canon. The most widely used sense of the word refers to the canon of Scripture; i.e., the list of books regarded by the Church as authoritative and divine. This article presents the history of the Old Testament Canon and the principles of canonicity; first, why the books are authoritative and divine, and second, when and how they were accepted by the Church and collected into a canon. The article examines any possible evidence and the discussions of the Councils related to the Old Testament Canon.